կապիտալ
ասեթ
մենեջմենթ

Հաստատված է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ
Տնօրենների խորհրդի կողմից
2012 թվականի հոկտեմբերի 24-ին

Խորհրդի նախագահ _____

ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ CLOSED JOINT-STOCK COMPANY * ՀԱ
ԿԱՊԻՏԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ
CAPITAL ASSET MANAGEMENT
02612561

ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կանոն 1-1. Կանոնները: Անվանումը

(ա) Սույն կանոնակարգը ներառում է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության ֆոնդի կառավարման կանոնները՝ դրանց կոդիֆիկացիայի նպատակով:

(բ) Սույն կանոնակարգի անվանումն է «Ֆոնդի Կառավարման Կանոնակարգ», իսկ կրճատ անվանումը՝ «Կանոնակարգ»:

Կանոն 1-2. Կառուցվածքը: Կոդիֆիկացիան և հղումները

(ա) Սույն Կանոնակարգը բաղկացած է հետևյալ գլուխներից՝ Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ, Գլուխ 2. Կառավարչի, կառավարչի ղեկավարների և կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեության իրականացնող անձանց ֆիդուցիար պարտականություններ, Գլուխ 3. Ֆոնդում ներդրումները, Գլուխ 4. Ֆոնդի կառավարման հետ կապված ներքին գործընթացները, Գլուխ 5. Կառավարչի գովազդը և հրապարակումները, Գլուխ 6. Տեղեկությունների բացահայտումը, Գլուխ 7. Գրառումներ վարելու պարտականություններ, Գլուխ 8. Կանոնակարգի տարեկան վերանայումը:

(բ) Կանոնակարգի օգտագործման պարզության նպատակով վերնագրերը համարակալվում են ըստ հերթականության: Վերնագրի անվանումը համառոտ բնորոշում է դրանում միավորված կանոնների առարկան:

(գ) Օգտագործման հարմարության և պարզության համար կանոնները վերնագրվում և համարակալվում են՝ ըստ վերնագրի համարի հերթականության (օրինակ՝ «Կանոն 2-1»-ը նշանակում է երկրորդ վերնագրի ներքո գործող առաջին կանոնը):

(դ) Կանոնն ունի հետևյալ կառուցվածքը՝

(1) կանոնը բաղկացած է ենթականոններից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն փոքրատառերով (օրինակ՝ (ա), (բ) և այլն).
(2) ենթականոնը բաղկացած է կետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող արաբական թվերով (օրինակ՝ (2)).
(3) կետը բաղկացած է ենթակետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն մեծատառերով (օրինակ՝ (Բ)):

(ե) Սույն Կանոնակարգում հղումները կատարվում են հետևյալ կարգով՝

(1) վերնագրին հղումը կատարվում է վերնագրի համարի նշմամբ և ենթադրում է տվյալ վերնագրի բոլոր կանոնները.
(2) Այլ կանոնի ենթականոնին, կետին կամ ենթակետին հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «2-3(բ)(5)(Ա) կանոնի համաձայն» հղումը նշանակում է «2-3 Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետ».
(3) Եթե հղում է կատարվում նույն կանոնի ենթականոնին, կետին կամ ենթակետին, կամ նույն ենթականոնի կետին կամ ենթակետին, կամ նույն կետի ենթակետին, ապա հղում կատարելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «(բ)(5)(Ա) Ենթականոնի համաձայն» հղումը նշանակում է «սույն Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն».
(4) Կանոնակարգի որևէ վերնագրի (կանոնի, ենթականոնի, կետի և այլն) հղում կատարվում է առանց «Կանոնակարգի» բառի օգտագործման: Համապատասխանաբար, եթե հղում է կատարվում որևէ ենթակետի առանց կետը նշելու, ապա հղումը համարվում է կատարված տվյալ կետի ենթակետին.
(5) Որևէ ձևին հղում ենթադրում է Կանոնակարգի Հավելվածներում ներառված տվյալ ձևը:

Կանոն 1-2. Կանոնակարգի ուժի մեջ մտնել և ուժը կորցնելը

(ա) Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից:

(բ) Սույն Կանոնակարգն ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից:

Կանոն 1-3. Օրենսդրությունը: Նպատակն ու մեկնաբանությունը

(ա) Սույն Կանոնակարգը ներքին իրավական ակտ է և ընդունվում է «Ներդրումային ֆոնդեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի համաձայն, հիմք ընդունելով՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածը:

Կանոն 1-4. Սահմանումներ

Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

«Առևտրային սխալ» նշանակում է հետևյալ դեպքերից յուրաքանչյուրը.

(1) արժեթղթերի գնումը վաճառքի փոխարեն,
(2) գործարքի կնքումը ոչ այն ֆոնդի համար, որի համար պետք է կնքվեր,
(3) ոչ պատշաճ արժեթղթի գնումը կամ վաճառքը,
(4) այնպիսի արժեթղթերի գնումը, որոնց մեջ արգելվում է ներդնել ֆոնդի կանոնների,
(5) գործարքների՝ Կառավարչի կողմից որոշված պայմաններից տարբերվող պայմաններով կնքումը:

«Կառավարչի Կանոնները» Կառավարչի գործունեությունը կարգավորող կանոններ պարունակող ներքին իրավական ակտերն են, ներառյալ սույն Կանոնակարգը, ռիսկերի կառավարման կանոնակարգը, գործարար վարվելակերպի կանոնները և այլ կանոնները:

«Համապատասխանության Գծով Աշխատակից» Կառավարչի կառավարման համապատասխան մարմնի կողմից նշանակված աշխատակից(ներ), ով (ովքեր) լիազորված է (են) իրականացնել սույն Կանոնակարգով նախատեսված համապատասխան գործառույթները:

«Օրենք» «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք**:**

Եթե այլ բան չի բխում սույն Կանոնակարգի բովանդակությունից, ապա սույն Կանոնակարգում օգտագործվող եզրույթներն ունեն Օրենքով սահմանված նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՌԱՎԱՐՉԻ, ԿԱՌԱՎԱՐՉԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԱՆՈՒՆԻՑ ԿԱՄ ԿԱԶՄՈՒՄ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանոն 2-1. Հիմնարար պարտավորությունները

(ա) Կառավարչի ղեկավարները և աշխատակիցներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր են գործել՝ ելնելով ֆոնդի մասնակիցների շահերից իրենց իրավունքներն իրականացնելիս և ֆոնդի մասնակիցների նկատմամբ իրենց պարտականությունները կատարել բարեխիղճ ու ողջամիտ կերպով, պատշաճ մասնագիտական մակարդակով:

(բ) Կառավարիչը պարտավոր է իր պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ֆոնդի մասնակիցների շահերից, իրականացնել իր իրավունքները և կատարել ֆոնդի մասնակիցների նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով, պատշաճ մասնագիտական մակարդակով:

(գ) Կառավարիչը պարտավոր է ֆոնդը կառավարելիս այնպիսի ներդրումային որոշումներ կայացնել, որոնք առավելագույնս համապատասխանում են ֆոնդի կանոններին:

Կանոն 2-2. Ֆիդուցիար պարտականությունների կատարումն ապահովելու հիմնական ճանապարհները

(ա) Կառավարիչը պարտավոր է բացահայտել իր հետ հարաբերությունների վերաբերյալ բոլոր էական փաստերը: Սույն ենթականոնի իմաստով էական փաստ է համարվում ցանկացած փաստ, որը կառավարչի կարծիքով ֆոնդի մասնակիցը կհամարի կարևոր կառավարչի ծառայություններից օգտվելու վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակ:

(բ) Ծառայություններ մատուցելիս կառավարիչը պետք է առաջնորդվի ֆոնդի մասնակիցների շահերի գերակայության սկզբունքով: Շահերի բախման դեպքում կառավարիչը պարտավոր է ֆոնդի մասնակիցների շահերը դասել սեփական շահերից բարձր:

(գ) Կառավարիչը պարտավոր է ֆոնդի բոլոր մասնակիցներին ծառայություն մատուցել առաջնորդվելով ֆոնդի մասնակիցների հավասարության սկզբունքով: Կառավարիչը չի կարող մեկ ֆոնդի մասնակցի համար ապահովել օգուտներ ի վնաս իր մեկ այլ ֆոնդի մասնակցի:

Կանոն 2-3. Լավագույն պայմաններով գործարքներ կնքելու պարտականությունը

(ա) Կառավարիչը ֆոնդի միջոցներով գործարքներ կնքելիս պարտավոր է այդ գործարքները կնքել ֆոնդի համար լավագույն պայմաններով:

(բ) Բրոքերային ծառայություններ ընտրելիս Կառավարիչը պետք է հաշվի առնի հետևյալ գործոնները.

(1) բրոքերի կողմից տրամադրվող հետազոտությունների արժեքը,
(2) գործարքներ կատարելու կարողությունները,
(3) միջնորդավճարները,
(4) ֆինանսական պատասխանատվությունը,
(5) Կառավարչի հետ հարաբերությունների մակարդակը,
(6) առևտրային համակարգի ուղղակի հասանելիությունը,
(7) պատվերների բարդությունը,
(8) բրոքերային ընկերության գաղտնիության ապահովման և շահերի բախման քաղաքականությունը,
(9) գործընկերների ցանցը,
(10) միջոցներ (արժեթղթերի և դրամականմիջոցների փոխառություններ) տրամադրելու հնարավորությունը,
(11) գործարքների կատարման ճշգրտությունը,
(12) բրոքերային ծառայություններ մատուցող այլ ընկերությունների կողմից առաջարկվող ծառայությունների որակը,
(13) այլ գործոններ, որոնք Կառավարիչ կարծիքով կարող են էապես ազդել ֆոնդի համար լավագույն պայմաններ ապահովելու վրա:

(գ) Կառավարիչը պարտավոր է առնվազն տարեկան մեկ անգամ ստուգել իր կողմից օգտագործվող բրոքերային ծառայությունների համապատասխանությունը 2-3(ա)-ով նախատեսված նպատակին:

(դ) 2-3(ա) ենթականոնով նախատեսված կառավարչի պարտավորության խախտում չի համարվում կառավարչի և բրոքերային ընկերության միջև այնպիսի համաձայնության կնքումը, որի միջոցով կառավարիչը բրոքերային ծառայություններից օգտվելու դիմաց ստանում է հետազոտություններ, հաշվետվություններ և կառավարչի կողմից ֆոնդի կառավարման գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար օգտագործվող տեղեկատվություն, պայմանով սակայն, որ կառավարիչը ֆոնդի մասնակիցներին նախապես տեղեկացնում է նմանատիպ համաձայնությունների մասին:

(ե) 2-3(ա) ենթականոնով նախատեսված կառավարչի պարտավորության խախտում չի համարվում կառավարչի և իր հետ փոխկապակցված բրոքերային ընկերության բրոքերային ծառայություններ

մատուցելու մասին համաձայնության կնքումը, պայմանով սակայն, որ կառավարիչը ֆոնդի մասնակիցներին նախապես տեղեկացնում է նմանատիպ համաձայնությունների մասին:

Կանոն 2-4. Կառավարչի և ֆոնդի միջև գործարքները

(ա) Կառավարիչը պարտավոր է ձեռնպահ մնալ իր կողմից կառավարվող ֆոնդերի միջև գործարքներ կնքելուց առանց ֆոնդի կանոններում այդ հնարավորությունը նախատեսելու:

(բ) 2-4(ա) ենթականոնով նախատեսված պահանջը չի տարածվում այն գործարքների վրա, որոնք ներառում են արժեթղթերը և/կամ դրամական միջոցները հետ վերադարձնելու կամ հետ վաճառելու պարտավարություն (ներառյալ, սակայն չսահմանափակելով ՌԵՊՈ, հակադարձ ՌԵՊՈ գործարքները, արժեթղթերի փոխառություն և այլն):

Կանոն 2-5. Պատվերների համախմբումը

(ա) Ընդհանուր դրույթներ.

(1) Կառավարիչն իրավունք ունի համախմբել ֆոնդերի հետ կապված արժեթղթերով գործարքներ կատարելու պատվերները:

(2) Կառավարիչը պարտավոր է վարել համախմբված պատվերների և դրանց բաշխման մասին հատուկ գրառումներ:

(3) Պատվերները համախմբելիս Կառավարիչը պետք է ապահովի հետևյալ պահանջների կատարումը՝

(Ա) պատվերների համախմբման հնարավորությունը նախատեսվել է ֆոնդի կանոններով,
(Բ) համախմբումը չի հանգեցնում ֆոնդի համար լավագույն պայմաններով գործարքներ կնքելու պարտավորության խախտմանը,
(Գ) Կառավարչի մոտ կատարվել է համախմբման մասին համապատասխան գրառում:

(4) Կառավարիչը կարող է գործածել համախմբված պատվերներով կատարված գործարքներից ստացված արժեթղթերի և կամ դրամական միջոցների բաշխման հետևյալ մեթոդներից մեկը կամ մի քանիսը՝

(Ա) համամասնական բաշխում՝ ըստ պատվերի ծավալի,
(Բ) բաշխման այլընտրանքային գործընթաց, որի դեպքում համախմբված պատվերի հիման վրա կատարված գործարքից ստացված արժեթղթերը և դրամական միջոցները բաշխվելու են արդարաբար այն դեպքում, երբ նմանատիպ բաշխումը հաստատվել է Կառավարչի համապատասխան իրավասու աշխատակցի կողմից:

(5) Համախմբված պատվերներով կատարված գործարքներից ստացված արժեթղթերի և կամ դրամական միջոցների բաշխման այլընտրանքային մեթոդն ընտրելիս Կառավարիչը պետք է հաշվի առնի հետևյալ գործոնները՝

(Ա) տվյալ ֆոնդի իրացվելիության կարիքները,
(Բ) Ֆոնդին հասանելի այլ ներդրումային այլընտրանքները,
(Գ) ներդրումային օբյեկտի ակնկալվող ռիսկայնության համեմատական ազդեցությունը տվյալ ֆոնդի ներդրումային ռազմավարության և նպատակների վրա,
(Դ) ֆոնդի կանոններով նախատեսված սահմանափակումները,
(Ե) ներդրման բաշխման արդյունքում ֆոնդի ներդրումային բնութագրիչների վրա էական ազդեցություն ապահովելու հնարավորությունը,
(Զ) գործարքի ծավալի համեմատ լրացուցիչ գործառնական ծախսերից խուսափելու անհրաժեշտություն,
(Է) Ֆոնդի ՝ տվյալ գործիքում ունեցած ներդրումային դիրքի հավասարակշռման անհրաժեշտությունը՝ պայմանավորված ակտիվների վերաբաշխմամբ կամ արտահոսքերով,

(6) Կառավարիչը պարտավոր է վարել համախմբման և բաշխման մասին գրառումներ: Գրառումները կարող են վարվել էլեկտրոնային եղանակով: Յուրաքանչյուր գործարքի բաշխման մասին տեղեկությունները պետք է գրառվեն ոչ ուշ, քան գործարքի կատարման մասին հաստատումը ստանալու օրը: Գրառումները պետք է տեղեկություններ պարունակեն բաշխման համապատասխան մեթոդն ընտրելու պատճառների և արդյունքների մասին:

(բ) ՀՀ պետական պարտատոմսերի հետգնման աճուրդին ներկայացվող պատվերների համախմբումը.

(1) Կառավարիչն իրավունք ունի համախմբել ֆոնդերի կողմից ՀՀ պետական պարտատոմսերի հետգնման աճուրդին ներկայացվող պատվերները:
(2) Կառավարիչը պարտավոր է վարել համախմբված պատվերների և դրանց բաշխման մասին հատուկ գրառումներ:
(3) Պատվերները համախմբելիս Կառավարիչը պետք է ապահովի հետևյալ պահանջների կատարումը՝

(Ա) պատվերների համախմբման հնարավորությունը նախատեսվել է ֆոնդի կանոններով,
(Բ) համախմբումը չի հանգեցնում ֆոնդի համար լավագույն պայմաններով գործարքներ կնքելու պարտավորության խախտմանը,
(Գ) Կառավարչի մոտ կատարվել է համախմբման մասին համապատասխան գրառում:

(4) Կառավարիչը կարող է գործածել համախմբված պատվերներով կատարված գործարքներից ստացված դրամական միջոցների բաշխման հետևյալ մեթոդները՝

(Ա) համամասնական բաշխում՝ ըստ պատվերի ծավալի,
(Բ) բաշխման այլընտրանքային գործընթաց, որի դեպքում համախմբված պատվերի հիման վրա կատարված գործարքից ստացված դրամական միջոցները բաշխվում են արդարացի և անաչառ, որը ապահովվում է հետևյալ գործոնների հաշվառմամբ՝

(5) տվյալ ֆոնդի իրացվելիության կարիքները,
(6) Ֆոնդի կողմից տվյալ պետական պարտատոմսի ձեռքբերման և հետգնման եկամտաբերությունների տարբերությունը,
(7) Կարճաժամկետ հեռանկարում ֆոնդին հասանելի այլ ներդրումային այլընտրանքները,
(8) ֆոնդի կանոններով նախատեսված սահմանափակումները,
(9) դրամական միջոցների բաշխման արդյունքում ֆոնդի ներդրումային բնութագրիչների վրա էական ազդեցություն ապահովելու հնարավորություն,
(10) գործարքի ծավալի համեմատ լրացուցիչ գործառնական ծախսերից խուսափելու անհրաժեշտություն,
(11) Ֆոնդի՝ տվյալ գործիքում ունեցած ներդրումային դիրքի հավասարակշռման անհրաժեշտությունը՝ պայմանավորված ակտիվների վերաբաշխմամբ կամ արտահոսքերով:

Կանոն 2-6. Առևտրային սխալները

(ա) Արգելվում է առևտրային սխալները ուղղելու հետ կապված ծախսերը դնել ֆոնդի վրա: Առևտրային սխալները ուղելու հետ կապված ծախսերը կրում է Կառավարիչը:

(բ) Կառավարիչը պարտավոր է վարել կատարված սխալների և դրանց վերացմանն ուղղված իրականացրած միջոցառումների գրանցմատյան:

ԳԼՈՒԽ 3. ՖՈՆԴՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

Կանոն 3-1. Հիմնարար դրույթներ

(ա) Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել միայն այն ակտիվներում, որոնք նախատեսված են ֆոնդի կանոններով ՝ հաշվի առնելով Օրենքով ԿԲ նորմատիվ իրավական ակտերով տվյալ տեսակի ֆոնդի համար սահմանված նեդրումային քաղաքականության պահանջները:

(բ) Ֆոնդի կառավարում իրականացնելիս կառավարչի աշխատակիցը պարտավոր է հետևել ՀՀ օրենսդրության, Կանոնակարգի, ֆոնդի կանոնների, Կառավարչի Կանոնների պահանջներին:

Կանոն 3-2. Ֆոնդում ներառված արժեթղթերից բխող իրավունքների իրականացումը

(ա) Ֆոնդի կանոնները պետք է տեղեկություններ պարունակեն ֆոնդում առկա արժեթղթերից բխող իրավունքների իրականցման մասին:

(բ) Կառավարիչը պարտավոր է պահպանել ֆոնդում առկա արժեթղթերից բխող իրավունքների իրականացման մասին տեղեկություններ: Նշված տեղեկությունները կարող են պահպանվել փաստաթղթային եղանակով:

(գ) Ֆոնդի մասնակիցը իրավունք ունի Կառավարչից պահանջել տեղեկությունների ներկայացում ֆոնդում ներառված արժեթղթերից բխող իրավունքները իրականացնելու մասին: Ընդ որում, Կառավարիչը պարտավոր է այդ տեղեկությունները տրամադրել գրավոր պահանջը ստանալուց 7 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 4. ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Կանոն 4-1. Արժեթղթերի ընտրություն

(ա) Արժեթղթերի ընտրությունը կատարվում է հիմք ընդունելով այն սկզբունքը, որ յուրաքանչյուր արժեթուղթ պետք է համապատասխանի ֆոնդի ընդհանուր ներդրումային քաղաքականությանը և փիլիսոփայությանը, իր բնութագրիչներով՝ շուկա, ճյուղ և այլն:

(բ) Այդ նպատակով կատարվում են հետևյալ քայլերը.

(1) ստուգվում է համապատասխան արժեթղթի համապատասխանությունը ֆոնդի կանոնների պահանջներին,
(2) որոշվում է արժեթղթերի այն քանակը, որի դեպքում ֆոնդի կանոններով սահմանված սահմանաչափերը չեն խախտվի,
(3) գնահատվում է տվյալ արժեթղթի իրացվելիության մակարդակը և դրա վրա ազդող գործոնները,
(4) գնահատվում է ռիսկ եկամտաբերություն բնութագրիչները,
(5) գնահատվում է տվյալ արժեթղթի գնի վրա ազդող գործոնները:

(գ) Կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է նաև որոշի ֆոնդի տեսանկյունից ներդրման նպատակահարմարությունը:

(դ) Կառավարչի իրավասու աշխատակիցը պարտավոր է վարել իր կողմից կայացվող ներդրումային որոշումների գրանացամատյան, որտեղ պետք է առնվազն ներառվի հետևյալը՝

(1) ներդրումային որոշման մանրամասները (արժեթուղթը, քանակը, գինը, պահելու կանխատեսվող ժամկետը և այլն)
(2) արժեթղթերի ընտրության հիմքում դրված չափանիշները,
(3) այն աղբյուրները, որոնց հիման վրա կայացվել է համապատասխան ներդրումային որոշումը,

ընթացիկ և արտակարգ վերլուծությունների մասին տեղեկություններ:

Կանոն 4-2. Ընթացիկ և արտակարգ վերլուծություն

(ա) Կառավարչի իրավասու աշխատակիցը պարտավոր է իրականացնել իր կողմից կառավարվող ֆոնդում առկա յուրաքանչյուր ակտիվի (արժեթղթի) շաբաթական վերլուծություն (այսուհետ՝ ընթացիկ վերլուծություն): Ընթացիկ վերլուծության արդյունքում կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է պարզի նոր ի հայտ եկած հանգամանքների ազդեցությունը արժեթղթի ներդրման բնութագրիչների վրա, ինչպես նաև ի հայտ եկած բնութագրիչները կամ առկա բնութագրիչների փոփոխությունը:

(բ) Այն դեպքում, երբ ընթացիկ շաբաթվա ընթացքում տեղի է ունենում ֆոնդում առկա որևէ արժեթղթի գնի տատանում 5 և ավելի տոկոսով, Կառավարչի իրավասու աշխատակիցը պարտավոր է իրականացնել այդ արժեթղթի հետ կապված ներդրումային որոշումը վերանայելու նպատակահարմարության վերլուծություն (այսուհետ՝ արտակարգ վերլուծություն): Արտակարգ վերլուծության արդյունքում Կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է պարզի նոր ի հայտ եկած հանգամանքների ազդեցությունը արժեթղթի ներդրման բնութագրիչների վրա, ի հայտ եկած բնութագրիչները, առկա բնութագրիչների փոփոխությունը, ինչպես նաև արժեթղթի գնի տատանման պատճառները, գների փոփոխության կանխատեսումները:

(գ) Ընթացիկ կամ արտակարգ վերլուծության հիման վրա Կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է գնահատի արժեթղթի վերաբերյալ ներդրումային որոշման և այն վերանայելու նպատակահարմարությունը, ինչպես նաև կատարի համապատասխան գրառումներ:

Կանոն 4-3. Ֆոնդում ներառված ակտիվների գնահատում

(ա) Կառավարչի իրավասու աշխատակիցը պարտավոր է իր կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդի կապակցությամբ յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ֆոնդի կանոններով սահմանված ժամը իրականացնել յուրաքանչյուր ֆոնդի ակտիվների գնահատում:

(գ) Կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է պատշաճ կերպով գնահատի, թե տվյալ ակտիվը ինչքանով է համընկնում օրենսդրությամբ, ֆոնդի կանոններով սահմանված գնահատման մեթոդների կիրառությանը, և դրա արդյունքում կիրառի գնահատման համապատասխան մեթոդը:

(դ) Երբ օգտագործվում է ֆինանսական հոսքերի ներկա արժեքի գնահատման մեթոդները, Կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է իր կողմից կատարվող հաշվարկներում լինի կոնսերվատիվ, հնարավորինս ընդգրկուն և հիմնավորված կանխատեսումներ իրականացնի, ինչպես նաև հաշվի առնի, ընկերության բաժնետոմսերի գնի վրա ազդող բոլոր մակրո, միկրո և մրցակցային գործոնները:

(ե) Պարտատոմսերի գնահատման դեպքում, Կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է պատշաճ կերպով հաշվի առնի շուկայական տոկոսադրույքի վրա ազդող գործոնները և դրա առկա իրավիճակը, ինչպես նաև կիրառի տվյալ գործիքին համապատասխան տոկոսադրույք:

(բ) Կառավարչի իրավասու աշխատակիցը պարտավոր է վարել իր կողմից կառավարվող Ֆոնդում ներառված ակտիվների գնահատման գրառումներ, որը պետք է առնվազն ներառի տեղեկություններ գնահատման հիմքում դրված մեթոդի, գնահատման հիմքում դրված արտաքին և ներքին գործոնների մասին:

(գ) Այն դեպքում, երբ Կառավարչի իրավասու աշխատակիցն իր մոտ առկա տեղեկությունների հիման վրա ֆոնդում ներառված ակտիվի պատշաճ գնահատում հնարավոր չէ իրականացնել, այդպիսի ակտիվի գնահատումը պետք է իրականցվի գլխավոր գործադիր տնօրենի կամ իր կողմից նշանակված անձի կողմից: Ակտիվի գնահատման համար գլխավոր գործադիր տնօրենը կարող է ձևավորել գանահատման հանձնաժողով, որի կազմը և գործունեության կարգը սահմանում է գլխավոր գործադիր տնօրենը:

Կանոն 4-4. Հանձնարարական բրոքերին

(ա) Կառավարչի իրավասու աշխատակիցը իր կողմից կառավարվող ֆոնդի հետ կապված բրոքերային գործարքներ կնքելու հանձնարարականը կազմում և ներկայացնում է անձամբ:

(բ) Բրոքերային ընկերության/բրոքերին տրվող հանձնարարականը պետք է լինի հնարավորինս հստակ և միանշանակ: Հանձնարարականը պետք է բխի ֆոնդի կառավարման ընդհանուր տրամաբանությունից, յուրաքանչյուր գործարքի մասին պետք է տրվի բավարար տեղեկատվություն, որպեսզի հնարավոր լինի ապահովել հանձնարարականի լավագույնս իրականացում:

(գ) Կառավարչի իրավասու աշխատակիցը պարտավոր է վարել իր կողմից կառավարվող ֆոնդի հետ կապված տրված հանձնարարականների գրանցամատյան: Յուրաքանչյուր կատարված գործարքի

արդյունքում, Կառավարչի իրավասու աշխատակիցը մուտքագրում է տվյալ գործարքի մասին տվյալները, որոնք առնվազն պետք է ներառեն՝

(1) գործարքի կատարման ամսաթիվը, ժամը,
(2) արժեթղթի տեսակը, նույնականացնող համարը,
(3) գործարքի տեսակը (առք, վաճառք և այլն),
(4) գինը,
(5) ծավալը,
(6) վճարված կամ վճարվելիք միջնորդավճարները,
(7) գործարքի նույնականացման համար,
(8) արժեթղթի վերաբերյալ տեղեկատվությունը, որը հնարավորություն կտա հետևելու օրենսդրությամբ և ֆոնդի կանոններով նախատեսված սահմանաչափերին:

Կանոն 4-5. Իրացվելիության դիտանցում

(ա) Յուրաքանչյուր օր Կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է իրականացնի իր կողմից կառավարվող ֆոնդի իրացվելիության ընթացիկ վիճակի դիտանցում, հաշվի առնելով ակնկալվող մարումները և մուտքերը, ինչպես նաև նախապես հայտնի մարումների ժամանակը:

(բ) Մարման մասին տեղեկատվություն ստանալուն պես Կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է ապահովի համարժեք իրացվելիություն ֆոնդում նշվածներից որևէ մեկի միջոցով՝

(1) Ֆոնդում առկա կանխիկի օգտագործում,
(2) ՌԵՊՈ համաձայնագրերի կնքում,
(3) Արժեթղթերի վաճառքի միջոցով,
(4) Սահմանափակ ժամանակահատվածով կառավարչի կողմից ֆոնդի նոր փայերի ձեռքբերման միջոցով,
(5) Ֆոնդի կանոններին համաձայն այլ թույլատրելի գործիքի միջոցով:

(գ) Տարբերակների ընտրության ժամանակ Կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է առաջնորդվի ֆոնդի մասնակիցների շահերով և ընտրի այն տարբերակը, որը բխում է ֆոնդի մնացող մասնակիցների շահերից:

Կանոն 4-6. Սահմանափակումներին հետևելը

(ա) Կառավարիչը պարտավոր է հետևել օրենսդրությամբ, ֆոնդի կանոններով սահմանված սահմանաչափերին.

(1) ներդրումային որոշում կայացնելու ժամանակ,
(2) ֆոնդում առկա ակտիվներիվերագնահատման ժամանակ:

(բ) Եթե վերագնահատում կատարելու արդյունքում պարզվում է, որ օրենսդրությամբ, ֆոնդի կանոններով նախատեսված սահմանաչափերը խախտվել են, ապա Կառավարչի իրավասու աշխատակիցը այդ մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել գործադիր մարմնի ղեկավարին (անհրաժեշտության դեպքում նաև պահառուին) և ներկայացնել եզրակացություն, որը կարող է պարունակել հետևյալ առաջարկություններից մեկը՝

(1) ոչինչ չանել, քանի որ շուկայի իրավիճակից ելնելով այդ խախտումը կարճ ժամանակում, վերագնահատման արդյունքում կվերանա,
(2) ոչինչ չանել և սպասել ավելի հարմար պահի այդ խախտումը վերացնելու համար,
(3) վերացնել խախտումը վաճառքի համար առավել նպատակահարմար արժեթուղթը (այլ ակտիվը) վաճառելու միջոցով:

(գ) Կառավարչի իրավասու աշխատակիցը եզրակացության մեջ պետք է առաջարկի նաև այն ժամկետը, որից հետո կամ որի ընթացքում պետք է իրականացվի կայացված որոշման վերանայում, որը սակայն չպետք է լինի 3 ամսից ավել:

(դ) Ենթականոն 4-6(գ)-ով նախատեսված ժամկետից հետո կամ դրա ընթացքում կատարված վերանայման արդյունքները Կառավարչի իրավասու աշխատակիցը պետք է անհապաղ ներկայացնի գործադիր մարմնի ղեկավարին:

(ե) Վերանայման արդյունքների հիման վրա Կառավարչի գործադիր մարմինը պետք է կայացնի ենթականոն 4-6(բ)-ով նախատեսված որոշումներից մեկը:

Կանոն 4-7. Ակտիվների զուտ արժեքի հաշվարկ

(ա) Կառավարչի իրավասու աշխատակիցը հաշվարկում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, վերագնահատված ակտիվների արժեքից նվազեցնելով ֆոնդի պարտավորությունները՝ ֆոնդի կանոններով և օրենսդրությամբ սահմանված կարգով:

(բ) Կառավարչի իրավասու աշխատակիցը պարտավոր է յուրաքանչյուր օր իր կողմից կառավարվող ֆոնդի զուտ ակտիվների ընթացիկ արժեքի մասին տեղեկացնել գլխավոր գործադիր տնօրենին: Արժեքի հետ միասին Կառավարչի իրավասու աշխատակիցը պարտավոր է գլխավոր գործադիր տնօրենին ներկայացնել տեղի ունեցած այն նոր տեղեկություններն ու փաստերը, որոնք էական ազդեցություն ունեն զուտ ակտիվների ընթացիկ արժեքի վրա:

Կանոն 4-8. Ֆոնդի միջոցներով կատարվող գործարքների սահմանաչափերը

(ա) Կառավարչի իրավասու աշխատակիցը մինչև իր կողմից կառավարվող ֆոնդի հետ կապված ներդրումային որոշում կայացնելը պարտավոր է ստանալ Կառավարչի գլխավոր գործադիր տնօրենի հաստատումը հետևյալ դեպքերում՝

(1) ներդրումային որոշմամբ նախատեսված գործարքի արժեքը գերազանցում է 10 մլն ՀՀ դրամը Հայաստանի Հանրապետությունում ներդրումների դեպքում և 5 մլն ՀՀ դրամը արտերկրում ներդրումներ դեպքում,
(2) Կառավարչի իրավասու աշխատակիցն ընտրում է նոր գործիք արտասահմանում ներդրումներ կատարելու համար (անկախ նախատեսվող գործարքի չափից),
(3) նոր շուկա մուտք գործելու դեպքում:

(բ) Ֆոնդում նոր տեսակի գործիք ներառելու մասին որոշումը կայացնում է Կառավարչի խորհուրդը:

ԳԼՈՒԽ 5. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՈՎԱԶԴԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Կանոն 5-1. Հիմնարար դրույթներ

(ա) Կառավարչի կողմից ֆոնդի մասնակցին տեղեկություններ տրամադրելիս պահպանվում են հետևյալ ընդհանուր սկզբունքները՝

(1) Տեղեկությունները պետք է մասնակցին հնարավորություն տան հասկանալու իրեն մատուցվող ծառայության էությունը, դրա էական պայմանները, ինչպես նաև ծառայության հետ կապված ռիսկերը,
(2) Տեղեկությունները չեն կարող ներկայացվել այնպիսի ձևով, որ թաքցվեն կարևոր դրույթները, ինչպես նաև տպավորություն ստեղծվի, որ դրանք ոչ կարևոր են,
(3) Այն դեպքերում, երբ տեղեկությունները պարունակում են համեմատություններ նույն կառավարչի կողմից կառավարվող այլ ֆոնդերի, այլ կառավարիչների կամ այլ կառավարիչների կողմից կառավարվող ֆոնդերի հետ, ապա

(Ա) այդ համեմատությունները պետք է լինեն տեղին, իմաստալից և պետք է ներկայացվեն անկողմնակալ ու հավասարակշռված ձևով,
(Բ) համեմատություններում պետք է նշվեն համեմատությունների համար հիմք հանդիսացած տեղեկությունների աղբյուրները,
(Գ) համեմատություններում պետք է ներառվեն այն հիմնական փաստերը կամ ենթադրությունները, որոնք հիմք են հանդիսացել համեմատության կատարման համար:

(բ) Ֆոնդի եկամտաբերությունը հաշվարկվում է կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերության հաշվարկման կարգը սահմանող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով;

(գ) Ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառեն ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ տվյալներ առնվազն վերջին 5 տարվա համար (5 տարվանից պակաս ժամկետով գործունեություն իրականացնելու դեպքում ներառվում են ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ տեղեկությունները գործունեության ողջ ժամանակահատվածի համար): Այդ տեղեկությունները պետք է ներառեն նախազգուշական դրույթ այն մասին, որ ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ նախկին ցուցանիշները չեն նշանակում, որ նմանատիպ ցուցանիշներ անպայմանորեն արձանագրվելու են նաև ապագայում: Կառավարչին արգելվում է ֆոնդի եկամտաբերության որևէ երաշխավորված մակարդակ խոստանալը:

(դ) Ֆոնդի տարեկան եկամտաբերությունների ներկայացում, որը պետք է նշում պարունակի այն մասին՝ արդյոք եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշներում ներառված են, թե ոչ ֆոնդի հարկերը, ֆոնդի ակտիվներից գանձման ենթակա վճարները և ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերը:

(ե) Կառավարիչը ներկայացնում է կառավարման արդյունքների վերաբերյալ հետևյալ տվյալները՝

(1) ֆոնդի ակտիվները յուրաքանչյուր տարվա վերջի դրությամբ,
(2) ֆոնդի կուտակային եկամտաբերությունը,
(3) ֆոնդի միջին եկամտաբերությունը հիմնադրման պահից,
(4) եռամսյակային և/կամ ամսեկան եկամտաբերությունները.
(5) ֆոնդի տարեկան եկամտաբերությունը;
(6) ֆոնդի ակտիվների բաժինը կառավարման ներքո գտնվող ընդհանուր ակտիվներում;
(7) Ֆոնդի եկամտաբերությունների տարեկան ստանդարտ շեղումը վերջին 3 տարիների համար (օգտագործելով ամսեկան եկամտաբերությունները): Ֆոնդի տարեկանի բերված եկամտաբերությունների հետ պետք է ներկայացվեն նաև համապատասխան ստանդարտ շեղումները, և հակառակը: Կառավարիչը իրավունք ունի հաշվել ֆոնդի եկամտաբերությունների տարեկան ստանդարտ շեղումը ավելացնելով ևս լրացուցիչ 3 տարվա տվյալներ, եթե երեք տարիների ստանդարտ շեղումը չի համապատասխանում կամ ընդունելի չէ Կառավարչի կողմից կառավարվող ֆոնդի համար;

(զ) Մեկ տարուց պակաս ժամկետայնությամբ եկամտաբերությունները չեն բերվում տարեկան եկամտաբերությունների:

(է) Կառավարիչը և նրա կողմից թողարկվող և/կամ պատվիրվող գովազդը պետք է համապատասխանի «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

(ը) Սույն Կանոնակարգի իմաստով գովազդ է համարվում տարբեր տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների և նախաձեռնությունների նկատմամբ:

(թ) Սույն Կանոնակարգի իմաստով գովազդ չեն համարվում.

(1) անձնամբ հեռախոսային խոսակցությունները և այլ նմանատիպ հաղորդագրությունը,
(2) ակադեմիական և հետազոտական հոդվածները, որոնք ներկայացնում են ակտիվների կառավարման մեթոդաբանությունը, սակայն չի առաջարկում խորհրդատվական ծառայություններ:

(ե) Կառավարչի անունից կամ նրա պատվերով հրապարակվող ցանկացած հրապարակում, հայտարարություն կամ հրապարակայնորեն մատչելի դարձվող գովազդային կամ այլ նյութ մինչև հրապարակումը պետք է համաձայնեցվի Համապատասխանության Գծով Աշխատակցի հետ, ով

ստուգում է այդ նյութերի բովանդակության և հրապարակման ճանապարհի համապատասխանությունը օրենսդրությանը, Կանոնակարգին և Կառավարչի այլ ներքին իրավական ակտերին:

Կանոն 5-2. Վկայությունները

(ա) Արգելվում է այնպիսի գովազդը, որը պարունակում է վկայություններ ֆոնդի ներկա կամ նախկին մասնակիցների կողմից:

(բ) Սույն կանոնի իմաստով վկայություն է համարվում կառավարչի մեկ կամ մի քանի ֆոնդի մասնակիցների կողմից կառավարչից ստացված ծառայությունների վերաբերյալ հայտարարությունները, որոնք կատարվել են կառավարչի նախաձեռնությամբ և/կամ խնդրանքով:

(գ) Սույն կանոնի իմաստով վկայություն չէ անկախ երրորդ անձի կողմից կառավարչի կողմից մատուցվող ծառայությունների մասին հրապարակումները և հայտարարությունները:

Կանոն 5-3. Նախկինում կատարված առանձին ներդրումները

(ա) Արգելվում է այնպիսի գովազդը կամ հրապարակումը, որը հղում է կատարում կառավարչի նախկինում կայացված մեկ կամ մի քանի հաջողակ ներդրումային որոշումներին, առանց հիշատակելու նույն ժամանակահատվածում կորուստների հանգեցնող ներդրումային որոշումները:

(բ) Կանոն 5-3(ա)-ից բացառություն են կազմում Կառավարչի հետ չփոխկապակցված անձանց կողմից կատարվող հրապարակումները, որոնք հղում են կատարում կառավարչի նախկինում կայացված մեկ կամ մի քանի հաջողակ ներդրումային որոշումներին:

(գ) Կանոն 5-3(ա)-ից բացառություն են կազմում ֆոնդի մասնակցի պահանջով Կառավարչի կողմից նախկինում կայացված կոնկրետ մեկ կամ մի քանի ներդրումային որոշումների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելը:

ԳԼՈՒԽ 6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Կանոն 6-1. Տեղեկությունների բացահայտման համար պատասխանատվությունը

(ա) Կառավարչի գլխավոր գործադիր տնօրենը սահմանում է Կառավարչի կողմից օրենսդրությամբ, ֆոնդի կանոններով նախատեսված տեղեկությունների հրապարակման համար պատասխանատու աշխատակցին:

(բ) 6-1(ա) ենթականոնով նախատեսված աշխատակիցը պարտավոր է ապահովել իրեն հանձնարարված տեղեկությունների հրապարակումը օրենսդրությամբ, ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:

(գ) 6-1(ա) ենթականոնով նախատեսված աշխատակիցը պարտավոր է գլխավոր գործադիր տնօրենին կիսամյակային հաշվետվություններ ներկայացնել տեղեկությունների հրապարակման պահանջների պահպանման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնել հրապարակման պահանջի կատարումն ապահովող միջոցների և միջոցառումների բարելավման ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 7. ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կանոն 7-1. Ընդհանուր պարտականություն

(ա) Կառավարիչը պարտավոր է վարել և պահպանել հետևյալ գրառումները՝

(1) Ֆոնդերի և ֆոնդի մասնակիցների հետ կապված սույն Կանոնակարգով նախատեսված տեղեկությունները,

(2) Կառավարչի վերաբերյալ վերջինիս կամ նրա պատվերով այլ անձի կողմից հրապարակվող տեղեկությունները, այդ թվում՝ ներդրումային առաջարկությունների, ֆոնդերի և վերաբերյալ տեղեկությունները և փաստաթղթերը,
(3) Իր կողմից և իր հաշվին կատարվող գործարքների և Կառավարչի աշխատակիցների կողմից կնքվող գործարքների վերաբերյալ տեղեկություններ,
(4) սույն Կանոնակարգով, Կառավարչի այլ կանոններով և գործող օրենսդրությամբ նախատեսված տեղեկություններ և փաստաթղթեր:

(բ) Սույն բաժնի իմաստով տեղեկություն է համարվում ցանկացած եղանակով գրանցումը, մատյանը, թղթային կամ էլեկտրոնային հաղորդագրությունը, էլեկտրոնային և թղթային նամակը:

ԳԼՈՒԽ 8. ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Կանոն 8-1. Կանոնագրքի վերանայումը

(ա) Սույն Կանոնակարգը և դրա հիման վրա ընդունված այլ կանոնները ենթակա են վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ:

(բ) Յուրաքանչյուր ֆինանսական տարի մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը Կառավարչի Համապատասխանության Գծով Աշխատակիցը կազմակերպում է Կանոնակարգի վերանայման աշխատանքները:

(գ) Կանոնակարգի վերանայումն իրականացվում է Համապատասխանության Գծով Աշխատակցի կողմից ղեկավարվող հանձնաժողովի կողմից, որն առնվազն պետք է ներառի՝

(1) Համապատասխանության Գծով Աշխատակցին,
(2) ներքին աուդիտորին,
(3) գլխավոր հաշվապահին կամ նրա ներկայացուցչին,
(4) կառավարչի գլխավոր գործադիր տնօրենի կողմից նշանակված կառավարչին:

(դ) Կանոնակարգի վերանայման հանձնաժողովը պարտավոր է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը կատարի Կանոնակակարգի դիտանցում պարզելու համար Կառավարչի կողմից Կանոնակարգի պահանջներին համապատասխանելու մակարդակը և կանոնների համարժեքությունը Կառավարչի գործունեությանը և նոր կանոններ ընդունելու և/կամ գործող կանոնները փոփոխելու անհրաժեշտությունը: Դիտանցման առարկա պետք է դառնան առնվազն հետևյալ ոլորտները՝
(1) ֆոնդի կառավարման գործընթացները, այդ թվում նաև ներդրումային հնարավորությունների տեղաբաշխումը և բացահայտումը,
(2) լավագույն պայմաններով գործարքներ կնքելու պայմանների ապահովումը,
(3) կառավարչի և կառավարչի աշխատակիցների կողմից իրենց հաշվին կատարվող գործարքները,
(4) ներդրողներին, ֆոնդի մասնակիցներին և կարգավորող և վերահսկող մարմիններին տեղեկությունների բացահայտումը,
(5) ֆոնդերի միջոցների պահպանությունը,
(6) գրառումների կատարման և պահպանության համապատասխանությունը օրենսդրության և Կանոնակարգի պահանջներին,
(7) կառավարչի ծառայությունների գովազդումը,
(8) ֆոնդերի ակտիվների գնահատումը և դրա հիման վրա վարձատրության հաշվարկումը և գանձումը,
(9) կառավարչի գործունեության շարունակականություն:

(ե) Դիտանցման արդյունքները ներկայացվում են հաշվետվության մեջ: Այն դեպքում, երբ Հանձնաժողովն առաջարկում է Կանոնակարգում կատարել փոփոխություններ և լրացումներ, հաշվետվությանը կից պետք է ներկայացվեն նաև Կանոնանակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ հաստատելու) մասին նախագծերը:

(զ) Դիտանցման հաշվետվությունը Համապատասխանության Գծով Աշխատակցի կողմից ներկայացվում է Կառավարչի տնօրենների խորհրդի քննարկմանը, ոչ ուշ քան մինչև բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին Կառավարչի տնօրենների խորհրդի նիստի օրը:

(է) Դիտանցման հաշվետվությունը պետք է ներկայացվի Կառավարչի կառավարման համապատասխան մարմնի քննարկմանը և հաստատմանը: